

ՍԿԵՍՈՒԹԸ

(ԳԻՒՂԵԿԱՆ ԲԸԲՔԵԲԻՑ)

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

IV

Սկեսրի տրամունջները անվերջ էին: Խօսում էր այն ամենի վրայ, ինչ որ հարսը նրա քէֆով կամ կամքով չէր կափարում: Մարդու հոգի էր սղոցում իր շարունակ դժգոհութեամբ ու գանգապաներով և պահանջում էր հարսի կողմից անպայման հնազանդութիւն:

Հարսի երեւակայած երջանկութիւնը օդն էր ցնդել: Սկեսրի կոպիկով վարմունքը խոցուում էր նրա սիրաբ: Սաթենիկը տիսուր էր և ձնշւած: Յուսախաբ կեանքի առաջին խոչնդոփի հանդէպ ընկճւած էր արդէն և վհարութիւնը մզմուզի պէս մաշում էր նրա զգայուն սիրաբ: Սաթենիկը յիշում էր իր հայրենական տունը, այնուեղ վայելած ազատութիւնը, իր վաղաթառամ տենչանքներն, և այդ ամենն աւելի էին սասարկացնում նրա սրտի կակիծները: Զահիլ հարսը իրան միայնակ էր զգում այդ դանը և որբացած: Ամուսինն էր առ այժմ նրա մխիթարութիւնը, բայց նա էլ պառաւի հետ խիստ էր վարում, աշխարելով մի կերպ յարմարւել:

Սաթենիկի յաճախ գանգապները սրիակեցին ամուսնուն, վերջապէս, միջամրել և խնդրել մօրը, որ սա հարսին խօսեցնի:

1) ՏԵ՛Ր «Մուշ» № 1:

—Այս ազի, ասաց նա, ախր հարսը խեղճ է. էլ դանն ուրշի մարդ չկայ. ես եմ գու. ես դանը շատ չեմ նարում, նստած ժամանակս էլ հարսը մնում է անխօս. ախր պա խեղճ չի, պա նրա սիրով չի ուզումքեղ մի քանի խօսք ասել: Ախր ջահիլ է, վհագուում է: Պա Ասրւած լիզու է դուել մարդուն, որ չխօսմա:

—Գէորգ ջան, պարասխանեց մայրը ծանր ու բարակ, զու իմ որդին ես. ինչպէս էլ լինի, ինելքդ իմ խելքից շատ չի կարող լինել: Ժամանակը կը դայ կը խօսեցնեմ: Հիմայ շուրջ է. թող էսպէս մնայ, որ մեծի պարիւ ճանաչի:

—Ազի, ինդրում եմ, թող խօսայ. իմ խաթրու արա էդ: Հասկացող, պարւառոր և համեստ հարսը միշտ մեծի պարիւը կը պահի, նրան կը յարգի, իսկ լիրը հարսը թէկուղ անխօս էլ լինի՝ իրանից մեծին ամեն կերպ կարող է կծովել: Պա չի կախւած խօսալուց կամ չխօսալուց: Օրինակներ շատ դեսած կը լինես:

—Զէ, էլի չխօսալն է լաւ: Ի՞նչ ես վազում. թող հլա մի կէս դարի անցնի: Քեզ հետ խօսում է, չի կշանհնեմ:

—Լսիր, ազի, ասաց Գէորգը վճռական եղանակով, —հրէս երկու շաբթից յերոյ ճանապարհ եմ ընկնելու օդարութիւն, որ հարսին չխօսացնես մինչ էդ օրը՝ ասելու եմ առանց քո հրամանի խօսայ:

—Կարող է որ,—ասաց Թամամը սաստիկ կրքով, —ծամերը կը քանդեմ, ծամերը:

Գէորգը յայտնեց ինոչը մօր պարասխանը: Սաթենիկը մի թեթև անէծք ու զղեց պառաւի հասցէին, յերոյ խոնարհեց գլուխը և կրկին խորասուզւեց տիսուր մրգերի աշխարհը: Մարդը նրան յուսադրում էր ուրախ կենալ, իսկ նա վշտալի եղանակով և դառնութեամբ պարասխանում էր.

—Ինչպէս ուրախ լինեմ. դու էսպեղ ես որ մայրդ հերս էսպէս է վարւում, պա քեղանից յերոյ ինչ է լինելու: Հիմայ ինչքան չլինի—քեղանից քաշւում է. յերոյ, որ ես մենակ մնամ, գլխիս ով գիտէ ինչ քար ու կարկուտ է մաղելու: Դու էլ գնում ես...

Եւ խեղճ հարսը նորից արտասւեց:

—Եղքան անխիղճ չի լինիլ, սիրելիս, պարասխանեց Գէորգը փաղաքշանքով, մի կերպ եօլա դար. պա ի՞նչ անենք. մեր մայրն է.

կարելի՞ է դէն ձգել, կարելի՞ է դուրս անել: Պառաւ կնիկ է. շատ ուշը մի դարձրու ասածների վրայ և մի կերպ եօլա ուար:

— Եօլա տար, վրայ բերեց Սաթենիկը հեգնութեամբ, —քեզ թնչ. թող իմ հոգին դուրս գայ, դու չես խօմ տանջւողը: Հեշտ է միշտ էլքան կռուց լսելը: Մի բան եմ անում, որ քեփովը չի լինում կամ իր ասածով, թէկուզ դա անուեղի էլ լինի, դիրես ինչ օյին է դնում զլիսիս. հայոյանքներ, անէծքներ է թափում թէ իմ և թէ ծնողացս զլիսին: Խնչպէս ուրախ կենամ:

— Մի կերպ համբերիր, սիրելիս, հրէս գնում եմ խանութա հաւաքեմ բերեմ գիւղը. նրանից յերոյ միշտ քեզ մօտ կը լինեմ և չեմ թողնիլ, որ մերս քեզ նեղութիւն պատճառի: Համ էլ դէ էն ժամանակ դու խօսում կը լինես, էլ խեղճ չես մնալ. ծուռի դէմ ուղիղը կ'ասես. նա էլ կնիկ է. քեզ կը սովորի և կամաց-կամաց յեզուն իրան կը քաշի:

Ամուսնու դւած ապագայ յոյսով փոքր ինչ թեթեացած՝ Սաթենիկը դուրս եկաւ տան կտուրը ազար շունչ առնելու: Հարեւանի աղջիկ Սոնան, որ արդէն հարսնացու աղջիկ էր, կանգնած էր իրանց կորին և գուլպայ էր գործում: Սաթենիկը մօտեցաւ նրան. մի խոր հոգոց հանեց ու ասաց.

— Սոնա, որ քեզ ուզող լինի, մարդու չգնաս. էս կեանքը կեանք չի, այլ ցաւ ու կրակ: Ափսոս չէ ազափ կեանքը:

Սոնան ուինչ չգուաւ պարասիանելու. նա միայն ամօթխածութեամբ աչքերը գետին խոնարհեց ու ժպարաց.

— Որ մենակ դու լինես ու մարդդ, էլի հլա ոչինչ. բայց որ սկեսուր ունենաս, էն էլ իրասածի, անհաշփ սկեսուր, վայը քո ճարին: Եթէ խելքդ կորի, մարդու չես գնալ. կը գնաս, կը փոշմանես:

— Ինչու. պա էնքան աղջկերք մարդու են գնում, ինչու չեն փոշմանում, —պարասիանեց Սոնան, գէմքի նոյն արդայալութիւնը պահպանելով:

— Մէկ հարցըու նրանցից, շափերը քեզ միւնոյն բանը կ'ասեն: Սաթենիկը այդ խօսքերի հետ միասին մի խոր հառաչանք արձակեց և սկսեց դիրել Սոնալի ձեռքի գուլպան:

Երեկոյեան դէմ էր: Պառաւ թամամը նկատեց նրան և կանչեց գրուն:

—Ինչ ես կանգնել կորին և խօսում. ջահիլ հարսն ես, պաքեզ վայթը է, Փողոցով մարդիկ են անցնում, ախր գետնում ենու Մարդդ էլ ասում է՝ շաբ եմ խօսում; Ի՞նչ հողը բայց գլխին մէրը, որ չխօսի:

Սաթենիկի դէմքի վրայ, որպէս պարասիստն, դրսունչ արգայալող մի կնճիռ ցնցւեց և նա արագութեամբ հեռացաւ սկեսրից Նրա բարկութիւնը նկատեց Թամամը:

—Ազնի, էգ ում վրայ ես նեղանում; —զոչեց սկեսուրը, —ում վրայ ես թողի թափ բալիս. ես քո ձնւուն եմ էգ ում մօք ես սովորել. այ քո խրապ փողի աչքնը քօռանան, էգ էր պակաս, հօմ... Տղաս էլ ասում է՝ հարսին խօսուր. դէ խօսցուր, հը՛:

Այս ամենը Թամամը ասում էր բարձրածայն, որ որդու ուշադրութիւնը գրաւի:

—Այ ազի, դէ հերիք է էլի, ասաց որդին զայրացած, —ախր ամենազափարկ բանի վրայ կը խօսան: Հարսը ի՞նչ մեղք արեց, որ կորին կանգնեց. է, թող փողոցով անցնող դղամարդիկ գետնեն, խօմ հարսիդ չեն ուզելու: Ախր ինձ էլ ես համբերութիւնից հանում:

—Դու էլ էդպէս ես ասում. ապրես կնկանդ բաց թող, ի՞նչ ուղում է թող անի: Էլ ես ոչինչ Ում համար եմ էսքան հաչում, հը՛, բարձրացրեց իր ձայնը Թամամը՝ արդասելով, —ում համար: Մէրը կը բարկանայ, կը մրթմրթայ, կը հայնոչի, հարսին կը թակի, բայց էղ ամենը իր որդու օգորի համար է անում, որդուն սիրելով է անում: Իսկ դու զրա փոխարէն սրբիս դիմչում ես և ինձ լացացնում: Ապրես...

—Ազի, ախր իսի էդպէս ես խօսում, —բացականչեց որդին համբերութիւնից դուրս եկած, —պա ես քեզ մի անգամ մի ցուրտ խօսքասել եմ: Դու ես իզուր գեղից քո սիրաց նեղացնում. ես ի՞նչ մեղաւոր եմ:

—Լաւ, լաւ, զիտեմ. դու գնա կնկանդ ծափով պար եկ. մօրդ պարիւը քեզ համար ոչինչ...

—Ազի, Ասոււած վկայ, հերիք է. էնպէս բաներ ես խօսում, որ...

—Ես սուս կը կենամ, միայն թէ կնկանդ քէֆը խարաբ չգառնայ: Դու նրա կամքով նարիր վեր կաց: Մօր ջանը թող դուրագայ. նրան նվ է լսողը:

Եւ լոեցին: Լուս ու մունջ, առանց միմեանց երեսի նայելու, խռովածի պէս՝ ընթրեցին և սուսու փուս ննջելու հեռացան: Սաթենիկը ամբողջ գիշերը անքուն անցկացրեց: Գէմ առ դէմ կանդնած անհաշտ սկեսուրը քուն չէր փալիս նրա աչքերին և հոգեմաշմրածմունքները խանգարում էին նրա հոգու հանգստութիւնը:

V

Գէորգի ուղևորւելու ժամանակը մօրենում էր: Դրա հետ միասին Սաթենիկի կրծքի վրայ օրէցօր ծանրանում էր այն քարը, որ վաղուց ճնշում էր նրան: Վերջին օրերը նա յաճախ, մանաւանդ երեկոները, ամուսնու հետ միայնակ մնալուց լաց էր լինում:

—Գնում ես, ինձ մենակ թողնում, մըմնջում էր Սաթենիկը, — ինձ էլ հետդ փար: Պա Բնչ պիտի լինի իմ ձարը մօրդ ձեռքին...

Ամուսինը խնդրում էր նրան թողնել ացդպիսի տխուր և յուսահափ մկքերը, միիթարում, յուսազրում էր նրան և խոսքանում շուր վերադառնալ: Խակայն Սաթենիկի գէմքին վաղուց էր դրոշմւած տիրութեան ինիքը այն օրից, երբ նրա երեակայած ամուսնական երջանիկ կեանքը թունաւորւել էր շնորհիւ մի անձնաւորութեան, որը ամբողջովին հակառակ էր Սաթենիկի սիրած ուսուցիչ Դրւարեանի քարոզած գաղափարներին և ձգութմնիրին: Ամուսնական կեանքը նրան մի քայլ էլ առաջ պիտի մղէր այն ճանապարհով, որ բաց էր արել նրա առաջ հոգեւոր գպրոցի աշակերպը: Բայց ահա մի հսկայ խոչնդուք կանգ էր առել նրա առաջ և մաշում էր ջահիլ հարսի հոգեկան ու բարոյական ոյժերը: Արդէօք նակարողանալու էր դիմանալ այդ ցաւին:

Որդու օրաբութիւն գնալուց երեք օր առաջ սկեսուրը խօսցրեց հարսին: Գէորգը սրիպեց նրան այդ անելու:

—Մարդդ գնում է, ասաց Թամամը, մենակ ես մնում: Հիմա խօսաւ Տանը մնում ենք ես ու դու: Հնազանդ կաց, խոնարհ ու խելօք, որ ես էլ ուրախ լինեմ, դու էլ. որ կարողանանք սիրով ապրել և էղպէսով մեր թշնամոց աչքերը հանել: Առ էս մանէթը և խօսաւ:

Սաթենիկը քիչ դարանւելուց յետոյ ընդունեց արծաթէ դրամը և առաջին անգամ խօսաց.

—Շնորհակալ եմ, Ասուած պահի դղիդ:

Այս դէպքը թեթևութիւն պարմառեց նրա ճնշւած կրծքին, թէև միւս կողմից մարտի հարսի սիրտը շորունակ լաց էր լինում ամուսնու հեռանալու պարմառվի: Իսկ մի անախորժ ընդհարում կարծէք դիրմամբ եկաւ աւերի լու Սաթենիկի ուրախութեան նշոյլները:

Նորահարսը դանը նարած՝ ամուսնու համար սպիտակեղին էր կարում: Նա ինքն էր ձեել ամեն ինչ և ինքն էլ կարում էր: Սկեսուրը հսկում էր նրա աշխատանքը: Մի շապիկը արդէն պարբաստ էր: Թամամը վերցրեց այդ և աչքի անցկացրեց: Շապկի կրծքին երկու կոճակ էր արւած, իսկ թեերի դաստակները լայն էին կարւած և առանց կոճակի:

—Ես ի՞նչ ես արել, աղջի, —նկատեց Թամամը զայրոյթով, — ի՞նչ հարկա որ է կրծքին երկու կոճակ. զուր է, մէկը հերիք է: Պատաստակներին ինչու չես կոճակ արել. էսպէս լայն բան կը լինի. քանդիր, դաստակները նեղացուր և կոճակներ կարիր:

—Կրծքին երկու կոճակ է հարկաւոր, որ բաց չգայ, պատասխանեց Սաթենիկը համեարութեամբ, —իսկ դաստակներին կոճակ անելը աւելորդ է, որովհետեւ լայն-լայն եմ անում. էսպէս գեղեցիկ է. նեղ դաստակները անշնորհք են:

—Անշնորհքի բան չկայ էստեղ. ինչպէս ասում եմ, էնպէս էլ արա:

—Այ ազի, ալսր ես տղիդ շապիկներին նայել եմ. քաղաքում կարւած է, ես էլ Ի՞ն տեսակ եմ կարում:

—Որ քաղաքի եղաւ՝ մե՞ծ բան է... էլ մի երկարացնիլ. ինչ որ ասում եմ՝ էն արա:

—Խաչը վկայ, ազի, զարմանալի կնիկ ես, շապիկը բերեմ տես: Սաթենիկը արագութեամբ վեր թռաւ տեղից, մօտեցաւ անկիւնում դրւած մնդուկին, միջից մի շապիկ հանեց, որ քաղաքի կար էր, և ցոյց տւեց սկեարին:

—Հա է, հա, գոչեց սկեսուրը բարկութիւնից ելած, —ի՞նչ ես ցոյց տալիս... Ախր առանց կոճակի դաստակներ կը լինին. ով է տեսել: իմ ասածը արա:

—Լաւ, տղիդ կը հարցնեմ: ինչպէս նա ուզի, էնպէս էլ լանեմ: —Ի՞նչ, տղիս կը հարցնես, գոչեց սկեսուրը զայրացած, —իի,

ես ինչ եմ, որ պղիս ես հարցնում: Եդ էլ իմ պատիւն է, հմա... Սիր ասում են հարսին խօսքոււ Խօսացնում ես, վերջը պատիւդ դա է լինում:

— Ամօթ է, ամօթ,— ասաց Սաթենիկը վիրաւորւած եղանակով,— մեծ կնիկ ես, դադարկ բանի համար սրգնեղութիւն մի գցիր էս բունը: Շապիկը տղադ է հազնելու. նրա քէֆով չկարեմ, քա՞քէֆով եմ կարելու: Սրանով խօմ քո պարւին չեմ դիպչում:

— Նրա լեզւին, սրա լեզւին... Տես ինչպէս համարձակ-համարձակ խօսում է... Օձ կծի քեզ, քեզ խրար գուղի էլ աչքերը քօռանան: Քեզ ասում եմ էսպէս արա, գու էլ արա: Աղջի, հենց պիտի հակառակւե՞ս:

Սաթենիկը ոչինչ չպարասխանեց: Պառաւի վերջին խօսքերը խիստ խոցեցին նրա միրուը: Վիշտն ու թախիծը պաշարեցին նրան: Սրբասուքը չէր չորանում նրա աչքերի աղբիւրներում, իսկ մաքները մեքենայաբար առաջ էին փանուժ չարաբասփիկ շապկի կարը:

Հետեւեալ օրը նա ճանապարհ դրեց իր Գէորգին օգարութիւն: Վշտի, թախծութեան և վհարութեան մարմնացումն էր նա այդ օրը: Նրա աչքերը կարմրել էին, այնքան լաց էր եղել նա Գէորգից բաժանւելու ժամին և դրա նախընթաց գիշերը:

VI

Գէորգը արդէն բաքու էր գտնւում: Նրա հեռանալուց անցել էր մօտ երեք ամիս: Գրում էր, թէ աշնանը խանութը ժողովելու և գիւղն է տեղափոխւելու՝ ընդմիշտ այդպեղ մնալու նպարակով: «Գիւղում ոչ մի խանութ չկայ, գրում էր նա, — ամենայարմար ժամանակն է այժմ: կարգին առուցուր կանեմ, համ էլ ձեզ համար դժար չի լինիլ»:

Սաթենիկը անհամբեր այդ օրին էր սպասում: Սկեսուրի անվերջ կրկնութիւնները, թէ հարսը պիտի սկեսուրին հնագանդ լինի, նրա ամեն մի խօսքը լի, և քանի որ փոքրաւոր է, միշտ մեծի կամքով պիտի գնայ, ոչ մի գործ իր գլխի չկարարի՝ մաշում էին Սաթենիկի սիրուը: Նրա վհարութիւնը սասրկանում էր միայնութեան և անօգնութեան պարճառով, իսկ յղիութիւնը նրան բոլորովին թու լասիրու և զիւրազգաց էր դարձրել:

—Ա՞ս, Ասպւած, բացականչում էր Սաթենիկը յուսահար ըստ պէսերին, —Երբ կը գայ Գէորգը, որ մի քիչ սիրոս բացւի. սա օր չի, որ ես եմ քաշում:

Աւրախ և գոհ բոպէսերը հաղւագիւր էին Սաթենիկի համար: Եթէ լինում էլ էին, իրասածի սկեսուրը մի որ և է դասարկ պատճառով աւերում էր իսեղճ հարսի ուրախութիւնը: Սաթենիկը ամեն օր փեսում էր իր երազած օրերի և դառն իրականութեան մէջ գրինող անդունդը: Կեանքը կամաց-կամաց կորցնում էր նրա աշքում իր նշանակութիւնն ու քաղցրութիւնը: Նա առ այժմ իր Գէորգի յոցտովը էր ապրում և այն արարածի սիրոյն, որի անորոշ էութիւնը խանգաղաղաբանք էր պարմառում նրա հոգուն: Զգալով իր կապարեալ անզօրութիւնը դիրապերող չարիքի դէմ և ներքուստ անկարող լինելով հաշուել դրա հետք՝ նա ամբողջապէս ընկղմել էր իր մէջ և լացում էր իր զրութեան վրայ: Իսկ հոգեկան մշտափեցաւը զգալի կերպով ազդում էր նրա առողջութեան վրայ: Սաթենիկը օր օրի վրայ մաշւում և գունագուում էր: Մայրը անհանգիստ էր աղջկայ զրութեամբ, իսկ սիեսուրը նրան նկապում էր.

—Ո՛խնչ չկայ. լզի է, զրանից է:

Հարսի ծնունդ նստելու ժամանակը մօրենում էր: Սկեսուր Թամամի միուքը այդ ժամանակ մի հարցով էր զբաղւած. «Ճնունդը աղջիկ է լինելու թէ տղայ»: Եւ նա ամեն օր աղօթում էր. «Այ Մարիամ Ասպւածածին, դու ամեն ինչ իմ սրբով անես, մի տղայ պարզես իմ որդուն.... Առաջին ծնունդը որ տղայ լինի, զաւակը հօր ջանին շուրով կը հասնի: Բայց եթէ աղջկով սկսւեց, նրանից յետոյ միշտ աղջիկ կը լինի: Ասպւած, քեզ զուրբան, դու լսիր իմ աղաշանքը»: Պառաւը զրա համար բոլոր սուրբերին մոներ էր իսուսանում: Բացի զրան նա հարսին էլ նախազգուշացնում էր ասելով՝

—Աղջի, որ բերածդ աղջիկ լինի, ել ինձանից չես պրձնիլ. դուրս կ'անեմ փողոցը երեխիդ հետ միասին, լսում ես:

Սկեսուրը այդ ասում էր հանաքի ձեռով և մեղմ ժպիտը երեսին, այն ինչ զորա թելադրողը նրա սանձարձակ կամքն էր, որ հարսի վրայ նրա ոչմից վեր պարասխանաբառութիւն էր դնում...

Տագմէրը սիեսուրն էր: Ծննդին ներկայ էին և հարսի մայրն ու քոյրը: Երկունքի ահեղ և սարսափելի ցաւերի ձեռքին բանջ-

ոռւմ էր Սաթենիկը։ Նա շարունակ լսց էր լինում և յուսահափ ու սրբաշարժ ճիչեր արձակում, ծկլբալով
—Վայ ինձ, մեռայ...

Սարսափելի զրութիւն, որ ծննդկանին տանում է մինչ մահաւան դռւաը և նորից ետք բերում։ Մահն ու կեանքը մարդ են մզում միմեանց դէմ, իսկ նոցա ահեղ հարւածներին ենթարկւողն է մի թույլ, գուրգուրանքի և կարեկցութեան արժանի էակ։

Սաթենիկի մայրը բռնած աղջկայ կաներից՝ յօյս և սիրո էր պալիս նրան։ Մայրը պիսուր էր, աղջկայ տանջանքները կակծեցնում էին նրա սիրով։ Սաթենիկի քոյրը կուչ էր եկել տան մի անկիւնում և թաշկինակը աչքերին բռնած արդաւում էր։

Սակայն այդ ամենը ոչինչ էր պառաւ Թամամի համար։ Նա մինչև անգամ բարկանում էր ծննդկանի վրայ ասելով.

—Աղջի, հերիք է, քիչ զարաշութիւն¹⁾ արա, կէսդ չդնաց.
ինչ է պարահել քեզ, չմեռար խօմ... Հաւարա մենք խակի երեխայ չենք բերել։ Համբերիր էլի։ Քո մէրը քեզ ինչպէս է բերել։ Հերիք է. էնքան կը զռզռաս, որ երեխայի գլուխը մի փորձանք կը բերես։
Վերջապէս երկար տանջանքներից յետոյ, որ պեսց պասը ժամ, ծննդկանը ազատւեց, նւիրելով իր ամուսնուն մի փափլիկ աղջիկ։

Լսեց մանկան յուսահափ և աղեկպուր ճիչը, որ արձակում էր նա ընդհագ-ընդհափ, երեխ զարհուրելով նոր աշխարհի օրաբորի պայմաններից։

Թամամը փաթաթելով նրան խանձարուրի մէջ՝ յուզւած և կորուած սրբով մըմրթում էր.

—Որ աղջիկ էիր լինելու, ի՞նչու ծնուեցիր։ Տես է, ուստի իսկի ձայնը կորում է... Տէրտէրը գայ քեզ տանի։

Փաթաթեց մանկան, ծննդկանի կողքով պառկեցրեց և, դառնալով հարսի մօրը, արհամարանքով տասց։

—Դէ, էս էլ ձեր գոված աղջիկը. ուստի խօմ։

Խնամին, որը նոյնապէս շափ էր ցանկանում, որ ծնունդը տղայ լինի, աշխարելով ծածկել իր վիշտն ու վիրաւորանքը, ծիծաղելով պարասիանեց։

¹⁾ Բոշալութիւն։

— Լաւ, խնամի Թամամ, վնաս չունի. Ասուած ողորմած է, էն միւսը տղայ կը լինի: Ի՞նչու ես յոյսդ կորում: Ախր որ էդպէս ես խօսում, ծննդկանի սիրան էլ ես կորում: պա խեղճ չի:

— Լաւ եմ անում. ինչու է աղջիկ բերում, որ ես էսպէս խօսամ: Թող տղայ բերէր, հարսիս պաշէի գնէի ճակարիս:

Ծննդկանը ուժասպառ մեկնւած էր անկողնում և փակել էր աչքերը: Լուռ էին ամենքը: Միայն երեմն լսում էր մանկան ճրոցը, որն երեկի գոհ չէր իր վիճակից:

Թամամը մրմրթալով՝ բարմերի գործերով էր կացել: Ծննդկանի մայրը նսպել էր հիւանդի զլխարակին և թաշկինակով քշում էր աներես ձանձերին նրա երսից:

— Փառքոց շատ, Ասուած, մրմնջում էր մայրը, — աղջիկս ազարւեց ողջ առողջ, սիրան միամբւեց. մնացածը եօլա կը գնայ:

VII

Ծննդկանի քառասունքը նոր էր լրացել: Սաթենիկը արդէն կազդուրւած լինելով՝ կարողանում էր զբաղւել գնային գործերով:

Մի օր արել մայր մրնելու վրայ էր, որ նա նսպած կար էր անում: Սկեսուրը նկարեց նրան, թէ օջախ վառելու ժամանակն է: Հարսը ասաց թէ շուրով ձեռքի կարը կը վերջացնի և այնուհետ վեր կը կենաց կը վառի: Մի բոլէ ես հարբերեց սկեսուրը և ապա կրկնեց.

— Աղջի, ախր քեզ հետ եմ. վեր կաց օջախը վառիր, կերակուր դիր վրան, դան առաջը առելիր:

— Այ, ոչ վեր կը կենամ էլի. ձեռքիս գործը քիչ է մնացել. վերջացնեմ, որ էգուց ի զուր գեղից սրա վրայ ժամանակ չկորցնեմ: Ի՞նչ կաց որ. չմթնեց խօմ. հլա արել մայր չի մրել:

— Օհօհօհօ... Պապանձւի լեզուի, պապանձւի... Ի՞նչպէս կարելի է. քո զիթը¹⁾ պիրի առաջ տանես: Թաթոսենց ուսնը ինչ ասեմ, որ քեզ նմանին լոյս աշխարհն է հանել... իմ ասածը թողած՝ իր էշն է ուզում առաջ քշել:

— Հայհոյիր, հայհոյիր, վրայ բերեց Սաթենիկը յուզւած և արհամարանքով:

¹⁾ Կամակորութիւն:

—Պա չհայհոյեմ ինչ անեմ:

Թամամը հարսի ձեռքից խլեց կարը և բարկացած գուցեց.
—Դէ վեր կաց էս սհաթին:

Բարձրացած աղմուկից մանուկը արթնացաւ օրօրոցում և լաց եղաւ: Սաթենիկը ուշադրութիւն չդարձնելով սկեսրի հրամանի վրայ՝ մօտեցաւ օրօրոցին, բարձրացրեց ծածկոցը և սկսեց ծիծ դաշլերեխային: Նրա այդ վարմունքը աւելի ևս կարաղացրեց սկեսրին: Այս անգամ նա սկսեց արդէն գոռալ.

—Անզգամի ծնունդ, պարճառը երեխան ես բերել, որ քո էշը քըլու:

—Այ կնիկ, կամաց խօսա՛, ասաց Սաթենիկը զայրոյշով, ախր ամօթ է. հարեւանները լսեն ի՞սկ կասեն:

—Թող լսեն, թող իմանան, որ քեզ նման մի լիրք հարս ունեմ, որ չի ուզում ամեն բան իր ժամանակին անել. իր ժամակին օջախ կը վառեն, ջրի կը գնան, հաց կը թրջեն և սկեսուրի խօսքին չեն հակառակւիլ:

—Լաւ է, լաւ, ընդհարեց Սաթենիկը, —թող երեխիս ծիծ դամ, յերոյ քո ասածը կ'անեմ:

—Երեխիդ որ յերոյ ծիծ դաս չի լինիլ. կէսը կը գնայ, թէ կը մեռնի: Զի մեռնիլ, մի՛ վախենայ. աղջիկ է, երեսը պինդ կը լինի:

—Տէր Ասրւած, գուցեց Սաթենիկը համբերութիւնը հարած, ցաւ է էլի, ցաւ:

—Էհ՛ը, էդ էլ իմ՝ պատիւն է համա. ծաղկես, ծաղկես... Վեր ընկնի քո հօր բունը, որ քեզ նմանին չբերէր իմ ջանովը գցէր:

Սաթենիկը պահ մի լուռ սկեսրի երեսին նայեց և ապա ասաց.

—Որ բերածս տղայ լինէր, խօմ էղպէս չէիր խօսալ հերս:

—Հա՛, պա չգիտի՞ս:

—Լաւ, ես ի՞ն, մեղաւոր եմ, որ աղջիկ է ծնւել, արդասանեց հարսը աղեկուր ձայնով: Նա արդասւեց և քիչ յերոյ լի արելութեամբ շարունակեց.

—Սուր ես խօսում. եթէ տղայ էլ լինէր, գու էլի էսպէս էլիր վարելու հերս, որովհերս գու ուզում ես, որ ամեն ինչ քո կամ քով, քո քէֆով և ասածով լինի. խռովարար կնիկ ես. քեզ հետ ով կարող է կառավարել: Ես եմ, որ քարշ եմ դալիս էս կեանքը:

Ասաց, ծածկեց օրօրօցի վարադոյրը և գնաց օջախը վառելու: Երեխան արդէն քնած էր: Թամամը ունքերը կիրած՝ շարունակում էր իր խրանիերը, զանգանիերը և անէծքը:

— Իհարկէ, դու չես մեղաւոր, ասում էր նա ինքն իրան, — մեղաւորը ես եմ, որ թողեցի քեզ նման ցաւ ու ցեցը բերեն իմ ջանը դցեն...

VIII

Աշնան սկզբներին օրարութիւնից վերադարձաւ Գէորգը: Նա խանութից իր բաժին ապրանքը բերեց: Մայրն ու բարեկամները շափ ուրախացան նրա այլպիսի վերադարձի համար: Սաթենիկի ուրախութիւնը կրկնապատիկ էր. նա այլ ևս մենակ չէր իրասածի և կամակոր սկեսուրին զիմադրելու համար:

Ամուսնուն զւարձացնելու նպագակով Սաթենիկը կամեցաւ իր հարեւանուհու երեխային զիրկն առնել՝ մարդուն զիմաւորելուց նրան ցոյց փալու թէ սա է քո զաւակը, իսկ յերոյ մի կուշփ ծիծաղել, բայց խսրասիրու սկեսուրը արգելք եղաւ դրան, ասելով.

— Էդ էր պակաս. շափ մի երեսդ պարզ է մարդուդ առաջ...

Ասէք մի կուժ սառը ջուր ածեցին խեղճ հարսի զլիսին: Նա թողեց այդ միտքը և իր զգացմունքները զսպած զիմաւորեց ամուսնուն: Թամամը առաջ անցաւ, գրկեց որդուն և երեք անգամ համբուրեց նա: ճակատից: Յերոյ անվստահ և երկիրդած քայլերով մօր գնաց Սաթենիկը և բարեկեց ամուսնուն: Գէորգը ամօւր սեղմեց նրա ձեռքը, բայց չհամարձակւեց մօր մօր նրան համբուրել:

Քրէհարաները բեռները վեր բերեցին գրաստներից և ջորիները բարսն գեղաւորցնելու: Բարեկամների և ազգականների այցելութիւնները վերջացան երկու օրւայ ընթացքում, որից յերոյ Գէորգը իր խանութի գործով կացաւ: Գիւղամիջում մի յարմար գուն կար, վարձեց՝ բարեկան չնչին քրէհով՝ և բերած ապրանքը տեղափոխեց այնտեղ: Խանութի իրեղէնները բաղկացած էին գլւխաւորապէս չթեղէնից, ամանեղէններից և այլ մթերքներից: Ամենքը նախանձում էին և ասում:

— Գէորգը էստեղ լաւ աշխատանք է վերցնելու, էս սաղ զիւղերը կը գան նրանից առուցուր կ'անեն: Կոչաղ շարժւեց, աֆֆերիմ Գէորգ:

— Գէորգ, պա երբ պիտի խանութդ շնորհաւորենք, ասում
էին նրա հասակակից մի քանի երիտասարդներ, — մեզ պիտի հիւ-
րասիրես:

— Աչքիս վրան. երբ որ ուզէք:

Ասելն ու անելը մէկ եղաւ։ Երկու օրից յետոյ կիւրակի էր։
Ֆի խումբ երիտասարդներ Գէորգի տանը ուրախութիւն էին անում։
Սպասաւորը Սաթենիկն էր, իսկ խոհարարուհին սկեսուրը։ Այսպիսի
խնջոցներում, ուր տանրիկնոջ վրայ մեծ պարտականութիւն է
լինենում, սկեսուրը շերեփը իր ձեռքից չի թողնում։ Խոհանոցը նա
պիտի կառ ավարէ։

Տղամարդիկ ուստում էին և կենացներ վայելում։ Սաթենիկը
սովի վրայ սպասաւորում էր նրանց։ Զնայած սկեսրի նկազողու-
թիւններին, նա երբեմն կանգնում էր հիւրերի մօտ և նրանց քէ-
ֆին նայում։ Թամամը խիար միջոցներ չէր կարող առնել դրա դէմ,
որովհերեւ հիւրեր կացին։ տան ներքին կեանքը ուրիշների առաջ
պիտ քօղարկւած մնար։

Երբ Սաթենիկը վերջին անգամ խորոված բերաւ և շամփուրը
ուղղակի թամադային մագուցեց, վերջինս ուրախութեամբ ընդու-
նեց նրա ձեռքից անուշահոր և համեղ խորտիկը, տաք-տաք խո-
րովածը վեր շարեց պինակի մէջ, յետոյ իւղոր մատները լպսուելուց
յետոյ՝ լիքը բաժակը ձեռքն առաւ և ասաց.

— Կամզանեա, խնդրեմ լսեցէք, էս թաս գինին խմում եմ
Սաթենիկ բաջու կենացը։ Սաթենիկ, Ասուած քեզ էլ, որդուդ էլ,
մարդուդ էլ պինդ ձեռքով պահի։ Մարդ ու կնիկ միշտ սիրով լի-
նէք և մի բարձի ծերանաք։ Ասուած, ինչ որ սրբներումդ բարի
բան կայ, կատարի։ Տղերք, չլսնդը նամարդ է։

Ամենքը մեծաւ հաճութեամբ խմեցին երիտասարդ տանրիկ-
նոջ կենացը։ Այնուհետ թամադան լցրեց նորից բաժակը, մեկնեց
Սաթենիկին և խնդրեց, որ սա շնորհակալութիւն յայրնի։ Սաթե-
նիկը ընդունեց բաժակը և մի բոոլէ մնաց շշկլւած։ Զգիրէր ինչ-
պէս յայրնէ իր շնորհակալութիւնը։ Երիտասարդների մէջ գորն-
ուում էր Գէորգի քաւորը, որի հետ Սաթենիկը անխօս էր։ Նա
մօրեցաւ ամուսնուն, կամենալով սրա միջնորդութեամբ յայրնել իր
շնորհակալութիւնը, բայց թամադան կանդնեցրեց նրան և ասաց.

— Քո լեզով ալիսրի ասես, Սաթենիկ, որ ամենքս լսենք: Եթ ուժից ես անխօս:

— Քաւոր Յովսէփի հետ չի խօսում, պատասխանեց Գէորգը կնոջ փոխարէն:

— Դարարկ բան է, գուեց թամադան, որի գլուխը արդէն տաքացել էր զինուոց, — ինչքան անխօս է մնացել, հերիք է: Քաւորի հեր անխօս մնալը որն է: Դարարկ բան է:

— Քաւոր Յովսէփին է մեղաւոր, որ մինչեւ հիմայ չի խօսացրել, ասաց Գէորգը:

— Այ քաւոր, ես ինչ անեմ, պատասխանեց Յովսէփը ամաչողուութեամբ, քանի անդամ եմ ուզել խօսցնեմ, չի եղել, մեծ սառամերը հակառակ ել է, չի թողել:

— Դարարկ բան է, կրկնում էր թամադան, աղջի, խօսա:

— Սանամեր, դէ խօսա էլի. դեսնում ես ինձ խալիասակում են:

Ամենքը բարձր ձս յնով ծիծաղեցին:

Սաթենիկը մրագանջութեան մէջ էր ընկել: Նա դագանւում էր առանց սկեսուրի հրամանի այդ քայլը անելու: Բայց պառաւին յայրնելը նշանակում էր մի արգելք սրեղծել: Առանց իրաւունքի խօսալ նշանակում էր առիթ դալ սկեսրին նոր փոթորիկ բարձրացնել և սրգնեղութիւնների պարճառ դառնալ: Ո՞րը ընորել: Սաթենիկը մօգեցաւ ամուսնուն, կռացաւ նրա ականջին և խորհուրդ հարցրեց.

— Հարկաւոր չէ ազուն ասելը, պատասխանեց Գէորգը բարձրացան, — էդ բանում մեղք չկայ: Քաւորը ասում է, հնքան մարդ էլ խնդրում է, էլ ինչ ես սուս կացել: Եթէ աղին դրա համար խօսալու լինի, ես նրա պատասխանը կը դամ: Նուու արա, մարդիկը սպասում են:

Սաթենիկը ժողովեց իր բոլոր ոչիգերը, բաժակը բարձրացրեց և անհամարձակ ձայնով արդասանեց.

— Շնորհակալ եմ, որ արժան համարեցիք իմ կենացը խմելու: Սալ լինէք ուրախ:

Խմեց գինին և շրապով գնաց խոհանոց:

— Աղջի, ինչ եղար զու, էդքան ուշացար, զուեց Թամամը

վրդովւած,—ի՞նչ ես ծնողող կախ գցում, էն աղերանց մօպ կանգնում: Դու էլ մի ամաչես:

—Ես ինչ անեմ. իրանք պահեցին, պատասխանեց Սաթենիկը ժողոալով:

—Ի՞նչու պահեցին, հարցրեց Սկեսուրը հետաքրքրութեամբ:

—Կենաց խմեցին, յետոյ թէ պիտի քո բերանով շնորհակալութիւն առնես: Ես էլ դէ քաւորի հետ չեմ խօսում: Նա խօսցրեց, ես էլ շնորհակալութիւն լայրնեցի: Ասացի թողէք գնամ ազուն լայրնեմ, դղագ՝ թէ ես ազուն պատասխանը կը դամ:

Մինչ Սաթենիկը պարումում էր իր կարարած քայլի մասին, պառաւը արգէն իր կարարութեան զագաթնակերին էր հասել: Նրա շրթունքներն ու ձեռները դողում էին: Ուզում էր խոհանոցի փայտերից մէկը վերցնել և հարսի գլխին խփել, բայց իրան զապեց: Առամների արանքով, ձայնը խեղդած և լի կրտով նա գոչեց.

—Գետինը մրնես դու, որ մեզ խայրառակում ես. էդ ի՞նչ ես արել քո գլխի... Մզջի, էլ օյին էր մնացել... Խայրառակւես դու, որ մեզ խայրառակում ես... Քեզ մեծացնողի աչքերը քուանան, հը՛ը՛:

—Ոչինչ խայրառակչութիւն չկայ, պատասխանեց հարսը յուզւած,—ի՞նչ ես էլի անէծքներդ սկսում: Էնքան մարդ որ քիթ կալելս աւելորդ էր համարում, էլ դու ինչու ես խօսում:

—Լեզուդ օձ կծի, հը՛ը՛, արբասանեց թամամը լի կրտով և բարկութեամբ:

Լոեց, այլ ևս ոչինչ չխօսաց: Զապեց իրան, որովհերեւ ընդհարումը կարող էր հիւրերի ականջին հասնել:

—Քեզ հետ յետոյ կը խօսամ, աւելացրեց նա:

Խնջոցքը վերջացաւ, հիւրերը վերկացան գնացին, իսկ Թամամը գեռ քանդում էր հարսի միսը: Տղան մէջ մզաւ, բարկացաւ մօր վրայ և սսաց.

—Դէ հերիք է էլի, ի՞նչ ես դլուխներս գանում: Ամեն մի բանի համար, որ քո քէֆին, քո կամքին հակառակ է, պիտի սրբնեղութիւն զցես էս դունը: Ի՞նչ մեղք ունի հարսը, որ նրան էդպէս լաց ես զցել: Որ ճարումդ ճար լինի, հաւաքա էս խեղճին կենդանի-կենդանի կը խեղդես... Ի՞նչ է եկել քեզ... Մենք ինդրեցինք,

քաւորը ուզեց, հարսն էլ խօսեց: Կամաց-կամաց պիտի վերանաց էդ յիմար սովորութիւնը, խօմ էսպէս չի մնալու: Ուզում ես որ միշտ ամեն ինչ հին կարգով գնայ... Զի կարելի... Անհաշու կնիկ ես: Պա չես խղճում սրան:

Նա ցոյց բւեց Սաթենիկի վրայ, որը պարուհանում նսփած՝ թաշկինակը աչքերին էր բարել և լացում էր:

—Ապրես, ապրես, պարասիսնեց մայրը դառնութեամբ և վիրաւորանքով, էդ էր մնացել, որ մօրդ ասես... Էնքան գինի ես խմել, որ խելքդ կորցրել ես. պա էդպէս չես խօսիլ, պա թաթերդ կնկանդ վրան չես քաշիլ: Քեզ համար ոչինչ, որ կնիկդ էնքան մարդու մօտ քաւորի հետ իր գլխի խօսում է և ինձ խաչուակում: Ապրես, ապրես. կնիկդ մեր բան նամուսը կորցնում է, քեզ համար ոչինչ. հլա մօրդ էլ յանդիմանում ես. ամօթ քեզ համար:

Եւ արդասւեց:

IX

Սաթենիկը միշտ բիսուր էր, բիսուր՝ ինչպէս իր ազափութիւնը նոր կորցրած թռչնակ: Նա շապ էր մրածում իր անմիտիթար վիճակի մասին և հոգեկան բանջանքները հալ ու մաշ էին անում նրան: Նա շարունակ գունափ էր և օրըսպօրէ նիհարանում էր: Ամուսինը անհանգամանում էր կնոջ այդ փոփոխութեամբ, իսկ սկեսուրը նկարում էր:

—Մի փոր երեխայ ես թերել, որ էդ օրն ես ընկել, պա յետոյ քո հալը ինչ կը լինի:

Վերջին ընդհարումից յետոյ Սաթենիկը յաճախ գանգագուում էր Գէորգին, որ սա սաարէ մօրը իր հետ կարգին վարւելու:

Գէորգը այդ մասին նորից խօսակցութիւն ունեցաւ մօր հետ և լսնդրեց նրան, որ հարսի գործերի մէջ շափ չխառնւի: Բացադրեց թէ հարսը երեխայ չէ, իր պարուականութիւնները հասկանում է, ընդունակ է դոցա կարարելու և ուրեմն սկեսրի պահանջը, թէ հարսը ամեն ինչ նրա քէֆով պիտ անի, անկարելի է և նոյն իսկ վնասակար: Շեշտել էր այն կետի վրայ, թէ նոր ժամանակները կեանքի վերաբերեալ նոր սովորութիւններ և հայեացքներ են մըց-

րել մարդկանց մէջ, որոնց գէմ կռւելը անխելքութիւն է: Զպիտի
յեզ մնալ ժամանակից, այլ պիտի նրա հետ առաջ ընթանալ...

Այդ խօսակցութիւնից յետոյ թամամը մի առ ժամանակ այլ
ևս չէր խօսում: Բայց նա լոել էր ոչ թէ համոզւած լինելով որ-
դու ասածների մէջ, այլ որ նրա խօսքերից նեղացել, խռովել էր:
Նա վճռել էր այլ ևս ոչ մի բանի մէջ չխառնել:

—Թող քանդուի ամեն ինչ, ասում էր նա ինքն իրան,—շատ
հարկաւոր է: Գէ որ չեն հասկանում, որ պատիւս չեն ճանաչում,
թող ամեն ինչ քանդուի:

Որդու և հարսի համար էլ հէնց այդ էր հարկաւոր: Բայց ափ-
սոս, որ երկարադրե չէր սկեսրի լոռութիւնը. երկու շաբթից յետոյ
նա դարձեալ իր իրաւունքների մէջ մրաւ և նորից ցոյց պւեց իր
իշխանութեան զօրութիւնը:

Գարնան գեղեցիկ օրերը հասել էին: Գիւղի այգեստանները և
արտօրայքը ծփում էին նորաբաց կանաչի և ծաղկած ծառերի
բազմերանդ ծաղիկների մէջ: Եղանակը պաք էր, երկինքը պարզ,
ջրերը վարարած: Ծռչունները ծլւում: Ամենուրեք կենդանութիւն
էր շնչում: Գիւղացիք օրւայ պարապ ժամերը անց էին կացնում
այգիներում, վայելելով բնութեան գեղեցկութեան պատճառած բա-
ւականութիւնները: Կիւրակի օրերը երիտասարդ կանաչք և դղա-
մարդիկ այգի էին գնում թէյ խմելու դալար կանաչուգների վրայ
և ծաղկած ծառերից բուրող անուշնուրութեան մէջ:

Այդպէս մի խումբ հարսներ իւրաքանչիւր կիրակի այգի էին
գնում: Բայցի թէյուխումից նոքա ունէին մի այլ զբաղմունք ևս:
Մէլիք Մելքոնմենց Աւագի հարսը, որ այդ խմբի մէջն էր, բոլորո-
վին այլ բնաւորութիւն էր ուել թէյուխումին: Տիկին նւարդը,
ինչպէս կոչում էին նրան գիւղում, մօտիկ գինւող Շ. գիւղաքաղա-
քիցն էր: Աւագը իր որդուն Շ.ի դպրոցումն էր ուսում ուել և
այդ իսկ պատճառով գիւղաքաղաքից հարս բերել որդու համար:
Իր գիւղից նա լայեղ չէր արել աղջիկ ուզելու: Տիկին նւարդը
աւարդել էր իր հայրենի քաղաքի օրիորդաց երկդասեան դպրոցը,
մի քանի պարուց յետոյ մարդու էր դնացել և այժմ դնացին աշ-
խականքներից զար պարապում էր ինքնակրթութեամբ՝ իր մուա-
ւոր զարդացման ասրիծանը բարձրացնելու: Նրա ամուսինը, որ

գիւղի յայտնի արհեստաւորն էր, նոյնպէս հետաքրքրւում էր գրականութեամբ, թէև նրա մրաւոր կերակուրը գլխաւորապէս լրագիրն էր: Ամեն ինչ նա լրագրի մէջն էր զդուում և լրագրով էր սնւում: Կնոջ համար նա անդամ էր գրւել Հրափարակչական ընկերութեանը: Այդպիսով նւարդը միջոց ունէր յագեցնելու իր ընթերցանութեան ծարաւը: Բայց նա միայն իր համար չէր հոգում: Նա մրածում էր և իւր ընկերուհի հարսների մասին, որոնք գրել կարդալ չգիրէին: Նւարդը այդպիսիներին ժողովում էր իր շուրջը, այդի էր բանում, կարդում էր նրանց համար գրքեր և կարգացածից խրառներ դուրս բերում: Ամենքը գոհ էին նրանից, ամենքը սիրում էին նւարդին:

Սաթենիկը իմացաւ այդ ժողովների մասին և մի անգամ ցանկութիւն յայտնեց մասնակցելու դրանց: Նւարդը պարասիսանեց թէ ուրախութեամբ ընդունում է նրա խնդիրը և աւելացրեց, թէ որքան շատ լինի մասնակցողների թիւը, այնքան լաւ:

Մի կիւրակի, երբ հարսները որոշեալ ժամին պիտի գնալին այդի, Սաթենիկը մօտեցաւ սկսուրին և յայտնեց իր ցանկութիւնը:

Թամամը նրան կուպիր ու կորակի պարասիսանեց.

—Ես էդպիսի ծովի-պուրի բաներ չեմ սիրում: Կինը ինչ, գիրք կարդալը ինչ: Հարկաւոր չի: մարդ դրանով չի խելօքանալ: Մեծիդ հնազանդ կաց—դա ամենից լաւ կը լինի: Փիչ ես համարձակի, որ հլա գնաս նւարդի հետ էլ նստես վեր կենաս, վերջն էլ ելնես զլուիս: Նա ինչ հարսն է, որ իր պարունի հետ պսակից դուն գալուն պէս խօսացել է: Զահիլ դղերանց հետ փողոցում պարահելուց կանգնում զրուցում է: Մի զոնաղ ¹⁾ զայ դունները, դեսար խոյն գլուխը բաց մէջ եկաւ, բարեւ ասեց և զոնաղի կողքին նստեց: Ինքն էլ ոչինչ չի անում: միայն կոկում է և դէս ու դէն գնում: Նրանից ինչ պիտի սովորես:

Պառաւի վերջին խօսքերը Սաթենիկը զրպարասութիւններ անւանեց, բերելով ապացոյցներ: Սորա ցոյց էին դալիս նւարդի՝ որպէս գնապեսուհու ջանասիրութիւնը: Միայն այդ դունքեսութիւնը

¹⁾ Հիւր:

Հակառակ էր պառաւ Թամամի հասկացողութիւններին և պահանջներին:

Այսպէս թէ այնպէս, բայց սկեսուրը հակառակում էր և շնայծ հարսի կրկնակի խնդրանքին, նա Սաթենիկին թոյլ չփուեց ժողովի գնալու: Սաթենիկը այդ ղէպքի մասին երեկոյեան յացոնեց ամուսնուն:

— Քանի՞-քանի հարսներ գնում են այգի, ասաց նա, — Նւարդը նրանց համար գիրք է կարդում, լսում են, նոր նոր բաներ են սովորում, իսկ ես տանը մենակ նսրած պիտի ամեն բանից զուրկ մնամ: Ուրիշները կարդալ գրելը չգիրեն, գնում են. իսկ ես գիրքեմ. ամենից առաջ էղպիսի գործի ցերեկից ես պիտի գնամ: պատճօթ չի տանը նսրելլ: Զգնացի, որ մէրդ սրբնեղութիւն չզցի էս տունը, համ էլ քո խորհուրդն էլ կը հարցնէի:

— Գնա, անպատճառ գնա, լաւ բան է, պարասխանեց Գէորգը վճռական եղանակով, — միւս անգամ ուշ մի դարձուր մօրս խօսքերին. գիրեմ, որ նա հակառակելու է մինչև վերջը: Դու գնա, ես նրա պարասխանը կը տամ:

Հետեւեալ կիրակի հարսները նւարդենց այգին էին ժողովւել: Սաթենիկին էլ իմաց էին արել: Այդ օրը Թամամը ճաշից առաջ մի տեղ հիւր էր գնացել: Այնդեղից նա երկու հիւանդի պիտի այցելէր, այնպէս որ երեկոյեան դէմ հազիւ կը վերադառնար:

Սկեսուրին առանց նախօրօք յայտնելու, Սաթենիկը երեխային խորին առաւ և գնաց նւարդենց այգին:

Արել մայր մրնելու մօր Թամամը տուն վերադարձաւ և տանը ոչ ոքի չգուաւ: Տղան խանութումը կը լինէր, իսկ համրսը: Դէս նայեց, դէն նայեց, հարեւաններից տեղեկացաւ, բայց ոչ մի կերպ չիմացաւ թէ հարսը մէր է գնացել: Զարութեան որդերը շարժւեցին պառաւի ուղեղի մէջ և նա սկսեց իր անէծքները:

Արել նոր էր մայր մրել, որ Սաթենիկը եկաւ: Պառաւը նրան քեսնելուն պէս յարձակւեց վրան և գոռաց.

— Մ' քո տեղը դարարկ մնայ, էս մէր ես կորել. եկել եմ տուն, ոչ ոք չկայ: Քեզ մէլ է իրաւունք ուել անից դուրս գալու: Պաշես իմանում, որ տանը էնքան պիտի նարես, որ սկեսուրդ գայ: Թօրդեղ էիր գնացել, ասա մի տեսնեմ:

—Նւարդենց այգին, պատասխանեց Սաթենիկը յուզւած, զգալով, որ փոթորիկը անխուսափելի է:

—Այ դու մեծ զալաթ էիր արել քո հօր, քո մօր և մեծ պապիկ հեռ, լսեցիր... Անզգամ, ես քեզ էն անգամ ասացի չգնասէնորեղ. էլի քո ուզածն ես անում, համա: Իմ խօսքերը բանի բեղ չես դնում...

Կոացաւ, ուզքից քօշը հանեց և խփեց Սաթենիկին: Քօշը դիպաւ հարսի ուսին և սաստիկ ցաւ պարճառեց: Ճաց խեղճը, լաց եղաւ և մրաւ սենեակի: Երեխան սարսափից սկսեց ձայնակցել մօրը:

—Այ Ասուած, մրմնջում էր հարսը, —կամ ինձ տար կամ էսպառաւին, որ միմեանցից ազագւենք: Էս օր չի, որ ես եմ քաշում:

Տուն եկաւ Գէորգը և դեսաւ ինոչը սենեակի անկիւնում կծկած: Գեռ հեկեկում էր: Իմացաւ եղելութիւնը և դարձաւ մօրը լի ագելութեամբ.

—Ազի, ամօթ քեզ համար, ամօթ. ա, դու ինչ սիրու ունես, քո սիրու ինչոչս է տարել, որ ևս անմեղ գառան վրայ ձեռք ես բարձրացրել... Անսիրու կնիկ ես: Զերիք է, ախր ինձ համբերութիւնից հանում ես... Խայտառակելու ես մեզ: Մի օր էս դանը ուրախ օր չփեսաց, ամեն օր կոմիւ, կոիւ: Պարճառն էլ ամեն անգամ դու ես: Այգի է գնացել, շար լաւ է արել: Ես եմ ասել, որ գնայ: Ե՞ս—իմ կինը, խօսքդ ինչ է: Զես թողնելու էս հարսին մի ազար շունչ քաշի: Գէ հերիք ես, ամա: Ասուած վկայ, խանութս կը հաւաքեմ, դուն դեղս կը ծախսեմ, կնկանս վեր կ'առնեմ կը գնամ էսպեղից և քեզանից կ'ազարւենք: Զերիք է. ախր ամեն բանի էլ չափ ու սահման կը լինի:

—Ապրես, ապրես որդի, պատասխանեց Թամամը ալլայլւած ձայնով,—մօրդ լաւ պապիւ ես գոլիսա Հա, մէրն է վապը, մէրն է մեղաւորը, իսկ կնիկդ արդար է... Աչքերս քօռանան, որ թողեցի դրան ինձ համար հարս բերեն... Էն ժամանակ պիտի մեռնէի պրծնէի, որ էս ամենը չփեռնէի:

Եւ արդասւալի աչքերով հեռացաւ միւս սենեակը:

Ամենքը ովսուր էին: Տան վրայ մի սե վարագոյր էր կախւած: Մի ինչ որ ծանրութիւն ճնշում էր ամենքի կուրծքը: Առանց

ընթրելու նրանք շատ կանուխ անկողին մրան և քնեցին։ Երկար ժամանակ Սաթենիկի աչքերին քռւն չէր դալիս։

X

Աշնան ցրո՞րը հասել էին։ Երկինքը շարունակ ամպամած էր, անձրեւ անպակաս և օդը խոնաւ։ Սարերի կարարներին շարունակ սրբոցներ էր գործում թանձր մառախուղը։ Սրբերն ու այգիները կորցրել էին իրանց կենդանութիւնն ու շքեղութիւնը։ Գիւղի ցեղասուր փողոցներով անցնելը դժւարացել էր։ Տարւայ այն ժամանակ գիւղացիներից իւրաքանչիւրը ասես մի-մի ծանրաչափ լինէր, եղանակի հետ միասին նրանք էլ մռայլ էին և փիսոր։ Հոգն ու թախիծը չէին վերանում նոցա դէմքերից։ Ամեն ոք ունքերը կիսած, ձեռները դրականում, մոքամուր կանգնած էր լինում գիւղամիջի մի ծացրին և լուռ ու մունջ մրածում։ Զկամ էին միմեանց հետ խօսում։ Մանր և անախորժ ժամանակ էր, շուրով հարկ պիտի ժողուէին, իսկ շատերի գրանում կուգէկ չկար։ Ոչ օրարականներն էին փող ողարկել և ոչ բամբակին էր ծախւել։

—Էլի պարոք պիտի արած, ճար չկայ, ասում էր ամեն մէկը ինքն իրան։

Պսկանենց Գէորգը այդ կողմից հոգս չունէր, նա կարող էր ոչ միայն իւր, այլ և մի քանի աղքատների հարկը վճարել։ Առձեռն փող կար նրա մօոր։ Սակայն նա ևս հոգսից զօւրկ չէր։ Այդ հոգսը նրա մայր Թամամն էր, որ շարունակում էր անհաշփ վարւել Սաթենիկին հետ և վշրամահ անել խեղճ հարսին։ Մարդ ու կնի՛ մի ուրախ օր չէին դեսնում իրասածի և անհաշփ սկեսրի շնորհիւ։

Եւ այդ կինը հալումաշ եղած կրկին յղի հարսի ականջին ամեն օր կրկնում էր։

—Ցես, հրէս ասում եմ։ Եթէ բերածդ էլի աղջիկ լինի, էս տանը չմնաս, էլ իմ երեսը դուրս չդաս։ Էլի մեր սիրոը պիտի սեացնես։ Պա տղաս խեղճ չի։ Առաջ տղայ ժառանգը պիտի ծնւի։

—Մարդս քեզ նման չի, որ տիրի, պարասխանեց Սաթենիկը, —պղայ լինի, չլինի —էլի դու մեր սիրոը սե ես պահելու։ Քո բնաւորութիւնը լաւ եմ ճանաչում։

—Օհօհօհօ, էլի լեզուն բլբլացրեց։ որ իմ խօսքիս խօսք չա-

սես, որ ինձ պատասխան չդաս, չի կարելի... Ինչպէս կարելի է։ Խանի աղջիկ ես ախրօ...»

Լոռում էր Սաթենիկը, չկամենալով ընդանեկան անախորժ փոթորկի առիթ քալ։ Նա զզւել էր դրանից և խղճում էր ամուսնուն։

—Ախ, Ասորւած, ինչ կը լինէր, որ էս անգամ տղայ լինի, մրածում էր Սաթենիկը, —տեսնես երմբ սէր ու խաղաղութիւն կընկնի էս տունը։

Ահա նորից Սաթենիկի ցաւը բռնելէ և երիտասարդ կինը իր բոլոր ոյժերը լարած՝ ջանք է անում զիմանալ երկուքի ահեղ ցաւերին։ Դարձեալ սկեսուրն էր տափմէրը, որը աչքերը հարսի երեսին յառած, կարծես շարունակ մրգում կրկնում լինէր։ Հը՛, որ աղջիկ բերես, կը թակեմ, որնից դուրս կ'անեմ քեզ։ Ներկայ էր և հարսի մայրը։

Գէորգը առանձնացել էր և անկողին մտել։ Երիտասարդի քունը չէր գալիս, կնոջ վտանգաւոր դրութիւնը շարունակ անհանգստացնում էր նրան և նա անհամբերութեամբ սպասում էր մի ուրախ լուրի։

Սաթենիկը ձեռները ծալած անց ու դարձ էր անում իր համար պարասարած սենեակում։ Դեռ ցաւը այնքան սասփիկ չէր և խեղճ կինը, իրան մոռացած, ուրիշների մասին էր հոգում։

—Ախ, Ասորւած, ծնունդս թող դղա լինի։ ծնողներս խեղճ են, սկեսուրիս երեսին չեն կարողանում նայեն... Թող դղա լինի, որ էս աներես պառաւը մի քիչ ուրախանայ, երեսիս ծիծաղելով խօսայ, իմ սիրով բացւի և մեր քան խռովութիւնները վերանան։ Խեղճ մարդուս ունքերը իսկի չի բարձրանում, ինչ ասեմ էսպէս պառաւի...»

Նա մրածում էր ծնողաց պատւի և ընդանիքի բախսաւորութեան մասին, մի բախսաւորութիւն, որը հիֆնած էր աշխարհ եկող զաւակի աղջիկ կամ դղա լինելու վրայ։

Վերջապէս Սաթենիկը ազագւեց, բայց, ո՞հ դժբախսութիւն, այս անգամ ևս ծնունդը աղջիկ էր։

—Վույ, գոչեց Թամամը, երկու ձեռքով գրող անելով ծնընդկանի գլխին, —ինչ կը լինէր, որ քո մէրը լոյս աշխարհ չգցէր քեզ։

Այ քեզ զուրբան, Ասուած, ախր իմ մեղքը մըն է, որ ինձ էսպէս պարիժ ես տալիս:

Սկեսուրի խօսքերը Սաթենիկի ականջին հասան և հիւանդի ցաւը կրկնապագկեց: Բոլորովին ուժասպառ և շնչասպառ՝ նա փռւեց իր տեղում: Աղջկայ մայրը այս անդամ ոչինչ չպարապանեց անխղճմրանք սկեսրին: Նա մօդեցաւ աղջկանը և նսպեց նրա անկողնի մօպ:

Թամամը քիչ յետոյ գնաց որդուն աւետելու:

—Հը՛, ազի, ինչպէս վերջացաւ, առանց փորձանքի ազար-էց, հարցրեց Գէորգը սրբագրով անհամբերութեամբ:

—Հա՛, բախտաւոր, ազարւեց. աղջիկ է բերել, հիմիկւանից բաժինք հազրիր: Խանութդ էլ ծախես, չես կարողանալու աղջկե-բանցդ մարդու տալու ծախքը հանես:

—Այ մէր, հերիք ես, ասաց Գէորգը բարկացած և ապելութեամբ, —քիչ կռաայ էդ հարսի գլխին: Էդ իմ դարձն է, թէ ինչպէս եմ իմ աղջկերանց մարդու բալու: Սխր քեզ ով է հարց-նում: Թէ ինիկս դղայ է բերել կամ աղջիկ... Էսպէս էլ բնաւորութիւն կը լինի... Թու...

Եւ վերմակը ուսերին քաշելով, երեսը շրջեց մօրից:

—Որդի, ինչու ես նեղանում, ախր ես քեզ ծիծ եմ գւել մեծագրել. ինչի ես թքում վրաս: Սրտիդ զիւչնում է, որ ես էսպէս եմ խօսնում... Անխելքը ես եմ, որ քեզ համար մրածում եմ, քո հոգսն եմ քաշում: Հողը իմ գլխին էլ, իմ բախտի գլխին էլ...

Եւ թաշկինակը արգասւալի աչքերին դանելով, հեռացաւ որդուց:

Հետեւեալ առաւօգեան մանկանը լողացնելուց Թամամը հանաքով քողարկւած անէծքներ թափեց նորածնի գլխին և երբ Սաթենիկի անդրանիկ աղջիկը՝ դարի և կիսական նղիսաբէթը՝ մօդեցել էր դադին ու զարմանքով մափը դէպի նորեկ քրոջն էր անում, պառաւը՝ ծիծաղելով պարասխանեց.

—Հա՛, էս է. սա էլ քո կրորն է. քեզ էլ, սրան էլ մի պա-քանի մէջ դնեմ դամ գէրգէրին դանի թաղի, հման...

—Այս, պարասխանեց երեխան միամբաբար:

Մի քանի՞ օր դրանից անցած, առաւօգեան Թամամը կրկին

լողացնում էր մանկանը, որը այդ օրը անընդհատ լաց էր լինում։
Ոչ մօր ծիծը, ոչ լողացնելը, ոչ օրօրը—ոչինչ չէր օգնում։ Երևի
ցառող գեղ ունէր։

—ի՞նչ անեմ ես, գանգապուռմ էր սկեսուրը համբերութիւնը
հարած,—զլիսիս եմ դնելու պահեմ... Նար մի աշքիս լոյսն ես...
Սուս, սուս...

Յեպոյ գառնալով հարսին՝ զայրոյթով ասաց.

—Աղջի, վերցուր ծիծ փուր նորից, որ ձայնը կտրի:

—Դէ հիմիկ տւեցի էլի, պարասիանեց հարսը բընքոնքալի
ձայնով,—սուս չի կենում։

—Են ցեղից է, որ սուս անի, ընկել է մօրը էլի. ասում եմ
վերցուր ծիծ փուր, իսկի ինձ լսում է։

—Դէ հը՛, էս էլ ծիծը, ասաց Սաթենիկը բարկացած և երե-
խային արագութեամբ գիրին առնելով,—սիր իսկի կաթն էլ չի
ուզում. զուով կարող եմ ծիծ փալ։

—Աղջի, էղ մւմ վրայ ես փոշիդ թափ սալիս, գոչեց սկե-
սուրը,—ես ինչ մեղաւոր եմ. ծնողը դու, երեխան քոնը. ով է
մեղաւոր, որ էդպէս մի պարիժ է ծնւել։ Հարս բերի, որ թոռներ
փեսնեմ, սիրած բացւի, հանգիստ ապրեմ էս փանը, չելաւ։ Զհան-
նամը, ծնունդը պղաց լինէր, էլի ոչինչ...»

Եւ լոեց, սպասելով պարասիանի։ Սաթենիկը, որ այդ օրը
երեխայի լացի և իր ցաւերի պարճառով մելամաղձուր և դիւրա-
գլրգիս էր դարձել, ներքուար սաստիկ յուզւած էր պառաւի խօս-
քերից։

—Հը՛, ինչի՞ սուս կացար, ասաց նա արհամարանքով և ադի-
լութեամբ,—մին էլ ասա, որ կշրանաւ։

—Պա ինչի չեմ ասիլ, գոչեց սկեսուրը,—փիս հարսի աշքն էլ
կը հանեմ... Կարծում ես թէ սուս եմ մնալու։ Դու ինձ ու էս
փան համար ցաւ ու կրակ դարձար։ Ասպւած ինձ ուզած հարսը
չհասցրեց։ Քեզ նման հարսին բանը պահելու չի, փանը։ Երկու
աղջկանդ էլ ձեռք բալու է և հօրդ տունը եփ ուզարկելու։

Սյոյ խօսքերը, որոնք չափ ու ահմանից անց էին, խոր խո-
ցեցին Սաթենիկի քնքոց սիրալ։ Նրա ոփն ու ձեռը զող էր լնկել,
զոյնը բոլորովին թռել էր և զէմքի վրայ երևան էին գալիս մէկ-

Ֆէկ ցնցումներ ու կրկին չքանում։ Հարւածը սաստիկ էր և խեղձը չկարողացաւ զիմանալ դրանու կամեցաւ խօսալ, բայց ձայնը խեղդեց կոկորդում և նրա աղեկոռուր լոցի միջից լսւեց հերկեալլ.

—Սպանիր, սպանիր մեռնեմ քո ձեռքից պրծնեմ էլի... Կը գնամ, կը կորչեմ էս դնից, միայն թէ դու ուրախ լինես, միայն թէ քո երեսը չփեսնեմ։ Անգէր չեմ, որ միշտ գերի մնամ քո ձեռքին։

Նա վեր թռաւ պեղից, թեթև շալը ուսերին ձգեց և շփապով դուրս ելաւ դնից։

—Աղջի, մւր ես գնում, գոչում էր նրա յերեից սկեսուրը, — աղջի, երկու օրւայ ծննդկանը պա դուրս կը գայ։ Աղջի, կաց, մեզ մի խայտառակիր։

Բայց Սաթենիկը չէր լսում։ Նա արդէն փողոցումն էր և շփապով գնում էր հերանց։ Փոքրիկ եղիսաբէթը լաց էր լինում մօր յեղեւից, իսկ նորածինը շարունակում էր իր մղկոցը։

Թամամը խղճաց երեխաներին։ Նա մօրեցաւ, գիրկն առաւ եղիսաբէթին, համբուրեց նրան և ասաց։

—Լաց մի լինիլ, նանան քեզ զուրբան, մայրիկը հրէս կը գայ... Վասու մայրիկ... Լաց մի լինիլ. գնանք քեզ չամիչ գոամ։

Դրան այգաէս լուեցրեց, իսկ նորածնի խանձարուրը գիրկն առնելով սկսեց անց ու դարձ անել սենեակում և գրկումը օրօրել նրան։ Քիչ յերոյ նորածինն էլ իր ձայնը կպրեց, կարծես նա մի փոթորկի էր սպասում։

—Էսպէս էլ խայտառակչութիւն կը լինի, կրկնում էր յաճախ Թամամը, ձեռքը գլխին խփելով։

Տուն եկաւ Գէորգը։

—Ո՞ւր է Սաթենիկը, հարցրեց նա։

Մայրը պատմեց եղելութիւնը։ Երիտասարդը ձեռքը ճակապին զարկեց և շանթահարի նման դուրս թռաւ դնից։ Աներոջ դունը մրնելով՝ պեսաւ, որ կինը պառկած է, Զոքանչը երկու վերմակով ամուր ծածկել էր նրան, իսկ ինքը կողքին նադել։ Աչքերի արդասուքը դեռ չէր չորացել։

—Էլ օյին էր մնացել, որ մէրդ աղջկանս գլուխը չբերի, ասաց դոքանչը, — պա ծննդկանի հետ էտպէս կը վարւեն։ Եկաւ էսորեղ։

երեսի գոյնը էդ պատի գոյնն էր դառել։ Սաղ ջանով գողում էր Ծածկել եմ, նոր է սկսել բաքանալ։ Հրէս Սռնային ուզարկում եմ, որ գնայ երեխաներին բերի. փոքրիկին ծիծ դալ է հարկաւոր էս զիշեր։

— Ի՞նչ անեմ ես, գոչեց Գէորգը յուզեած և լացակումած, — ջոկելու եմ, կնկանս հետ առանձին ապրեմ։ Ինչ որ մերս ուզի կը բամ, միայն թէ կնկանս ազափ թողնի։ Գիւղացիք ինչ ուզում են թող խօսան։ իմ կնոջ կեանքը ամեն բանից թանկ է ինձ համար. էլ չեմ կարող հ ամբերել ու դանել...

— Ինչ ուզում ես արա, մրմնջում էր Սաթենիկը տնքալի ձագ-նով, — միայն ինձ ազափիր էդ ցաւ ու կրակից։

Նրա ձայնը ասէք յարակի դալիս լինէր։

Սաթենիկը այդ զիշեր սասպիր գենդ ունեցաւ։ Այսուհետ օր օրի վրայ նրա մարմինի բաքութիւնը բարձրանում էր։ Հարսը սարսափելի վրանգի էր մարդուած։ Նրա ծնողները և ամուսինը յուսահարսութեան մէջ էին և չգիտէին ինչ անեն։ Խեղճ մայրը ծածուկ լաց էր լինում, նախաղգալով աղջկայ գրութեան անյօւսալի վախճանը։ Սաթենիկը ծննդին յաջորդող գենդ էր սպացել։ Հայրական փունին եկած օրւանից երեք օր անցած նա՝ զուրկ բժշկական օգնութիւնից՝ ծանր տանջանքների մէջ աւանդեց իր հոգին, խորսդի մէջ թողնելով թէ ամուսնուն և թէ ծնողացը։

— Կշտացմր, արտասուքի միջից գոռում էր Գէորգը, դառնալով մօրը, — կշտացմր, դէ դինջացիր։

Թամամը, որ ինամուց դուն էր եկել հարսի մահւան պարճառով, ծեծում էր իր գլուխը և ողբում։

— Ասպւած, ինչու ինձ չփարար հարսիս դեղ. պա խեղճ չէր դղաս, պա խեղճ չի էս ծծկեր երեխան...»

Գէորգը լսց լինելուց դարար չէր առնում։

— Վայ իմ անբախտ Սաթենիկ ջան, գոչում էր նա անդադար։

Երբ աշքերը ընկնում էին երկու փոքրիկների վրայ, Գէորգը մազերն էր սկսում փետել և անէծք ու նախարինը ուզում իր մօրը։ Խսկ մայրը այլ ևս լուռ էր կացել և միայն առափ արփասուք էր թափում։ Նա մնացել էր քարացած անսպասելի աղէտի առաջ և չէր կարողանում ոչ պքի երեսին նայել։ Գլուխը քարշ՝

թաշկինակը շարունակ աչքերին էր տանում: Լուս էր: Զգում էր նա արդեօք իր յանցանքի ամբողջ ծանրութիւնը, թէ ներքուար չարանում էր անհնազանդ հարսի վրայ:

Վաղաթառամ էակի մարմինը հողին յանձնեցին: Համարեա բոլոր գիւղացիք ներկայ էին յուղարկաւորութեանը: Ամենքը ծանր տպաւորութեան տակ վերադարձան գերեզմանագնից, ծանօթ լի-նելով Սաթենիկի ցաւարանջ կեանքին:

Կարճ միջոցից յեփոյ մօր թարմ գերեզմանի կողքին դեղ գտաւ նորածինը, որ կարծես կարարւած աղէտի ծանրութիւնից և թա-մամ տափի ապագայ կռոոցից ազարւելու համար՝ գնաց մօր երեկից...

Հ Յ Ո Ր Ո

Այսօր ուժամբ մերանու սեցանձ
անուն այ առօտ է ծիստ ու ոչ քա-
յուրացցա պահ առ առելոր ու
առանձ և առանձ պահը մեջանց

Այսօր անուն առջան առջան այս
պահանձ ուր ան հայ ան զարդ ըստ
առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ

Այսօր առջան ու առջան այս
պահանձ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ